



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ
Ն Ա Խ Ա Գ Ա Հ

Հ Ր Ա Մ Ա Ն

«29» 12 2020թ.

N 105-Ձ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐԶԵՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ (ԱՅԴ ԹՎՈՒՄ
ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ) ՈՉ ՏԱՐԱՆՑԻԿ, ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՈՒ ՓՈՂՈՑՆԵՐԻ
ԵՐԹԵՎԵԿԵԼԻ ՄԱՍԻ ԵՎ ՄԱՅԹԵՐԻ ՍԱԼԱՐԿՄԱՆ, ԽՃԱՊԱՏՄԱՆ ԵՎ
ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1 հոդվածի 3-րդ մասի
10-րդ, 11-րդ և 15-րդ կետերը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի
2018 թվականի հունիսի 11-ի N748-Լ որոշման հավելվածի 16-րդ կետի 2-րդ ենթակետով

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ


1. Հաստատել՝

- 1) Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում (այդ թվում
բնակավայրերում) ոչ տարանցիկ, տեղական նշանակության ավտոմոբիլային և
ներհամայնքային ճանապարհների ու փողոցների երթևեկելի մասի և մայրերի
սալարկման, խճապատման և բարեկարգման աշխատանքների կատարման
մեթոդական ուղեցույցի բացատրական մասը՝ համաձայն Հավելված 1-ի,

2) Հայաստանի Հանրապետության մարզերի համայնքներում (այդ թվում
քնակավայրերում) ոչ տարանցիկ, տեղական նշանակության ավտոմոբիլային և
ներհամայնքային ճանապարհների ու փողոցների երթևեկելի մասի և մայթերի

սալարկման, խճապատման և բարեկարգման աշխատանքների կատարման
մեթոդական ուղեցույցի գծագրական, սխեմատիկ մասը՝ համաձայն
Հավելված 2-ի:

Պարտականությունները կատարող՝

 Invalid signature

X

Handwritten signature

Signed by: GHULARYAN ARMEN 3509540050

Ա.ՂՈՒԼԱՐՅԱՆ

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի

պարտականությունները կատարողի

2020 թ. դեկտեմբերի 29-ի N 105-Ն հրամանի

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ (ԱՅԴ ԹՎՈՒՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ) ՈՉ ՏԱՐԱՆՑԻԿ,
ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ
ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՈՒ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԵՐԹԵՎԵԿԵԼԻ ՄԱՍԻ ԵՎ ՄԱՅԹԵՐԻ ՍԱԼԱՐԿՄԱՆ,
ԽՃԱՊԱՏՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

(ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՄԱՍ)

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ՀՀ տարածքում նոր կառուցվող և վերակառուցվող ընդհանուր օգտագործման ավտոմոբիլային ճանապարհների նախագծման և կառուցման հիմնական պահանջները սահմանվում են ՀՀՇՆ 30-01-2014 <Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում> և ՀՀՇՆ IV-11.05.02-99 <Ավտոմոբիլային ճանապարհներ> նորմատիվատեխնիկական փաստաթղթերով:

2. ՀՀ կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ (այսուհետ՝ **Որոշում**) ամրագրված են քաղաքաշինական գործունեությանն առնչվող թույլտվությունների ձեռքբերման կարգավորումներ և ընթացակարգեր՝ I, II, III, IV և V կատեգորիայի՝ ցածր, միջին, միջինից բարձր, բարձր և բարձրագույն աստիճանի բարդությամբ դասակարգված շինարարական օբյեկտների (և/կամ աշխատանքների) համար, որոնցից գերակշիռ մասի (II, III, IV և V) նկատմամբ նախագծային փաստաթղթերի լրակազմի և շինարարության թույլտվության պահանջը պարտադիր է:

3. Մինչև ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 24-ի N1583-Ն որոշման ընդունումը՝ ի թիվս ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ընդհանուր օգտագործման պետական ավտոմոբիլային ճանապարհների՝ ՀՀ մարզերի քաղաքային և գյուղական համայնքների բնակավայրերում՝ ոչ տարանցիկ, տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների և ներհամայնքային փողոցների ու մայթերի շինարարական (այդ թվում՝ սալապատման և խճապատման, վերանորոգման) աշխատանքները ևս հիմնականում դասակարգվում էին որպես միջին, միջինից բարձր կամ բարձր՝ այսինքն՝ II, III և IV կատեգորիայի ռիսկայնության աստիճանով:

4. Ներկայումս, ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 24-ի N1583-Ն որոշման ընդունմամբ, ՀՀ մարզերի քաղաքային և գյուղական համայնքների ավտոմոբիլային ճանապարհների (ոչ տարանցիկ, տեղական նշանակության ճանապարհների, ներհամայնքային փողոցների ու մայրերի) սալապատման և խճապատման, դրանց ընթացիկ նորոգման ու բարեկարգման աշխատանքների ձեռքբերումը պարզեցվել է և վերջիններս դասակարգվել են, որպես ցածր ռիսկայնության (I կատեգորիայի) օբյեկտներ, որոնց համար չի պահանջվում շինարարության թույլտվություն:

II. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

5. Սույն մեթոդական ուղեցույցով նախատեսված կարգավորումները կիրառելի են **պատվիրատու հանդիսացող իրավասու մարմինների (համայնքապետարանների)**՝ ՀՀ մարզերի քաղաքային և գյուղական համայնքների, ինչպես նաև **իրավասու մարմին չհանդիսացող (մասնավոր) պատվիրատուների**՝ ֆիզիկական և իրավաբանական անձանց (այդ թվում իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող պետական մարմինների) համար:

6. Սույն մեթոդական ցուցումները.

1) կրում են խորհրդատվական բնույթ ՀՀ պետական և համայնքային (այդ թվում սուբլենցիոն ծրագրերի, դրամաշնորհների, ինչպես նաև վարկային) բյուջեների և ոչ պետական բյուջեների միջոցների հաշվին նախատեսված ու ցածր ռիսկայնության աստիճանով դասակարգված (I կատեգորիայի)՝ ՀՀ մարզերի քաղաքային և գյուղական համայնքների բնակավայրերում՝ ոչ տարանցիկ, տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների և ներհամայնքային փողոցների ու մայրերի սալապատման, խճապատման, ընթացիկ նորոգման և բարեկարգման շինարարական ծրագրերի պատվիրատուների և կատարողների համար (բացառությամբ օրենսդրական և ենթաօրենսդրական իրավակարգավորումների մասով նախատեսված պարտադիր պահանջների):

III. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

7. **Իրավասու մարմին չհանդիսացող պատվիրատուները (պետական կառավարման մարմինները, մասնավոր ներդրողները՝ ֆիզիկական և իրավաբանական անձինք)**

Որոշմամբ հաստատված N 4 հավելվածի N1 Ցանկի 3-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն.

ՀՀ մարզերի քաղաքային համայնքների ոչ տարանցիկ, տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների, ներհամայնքային փողոցների երթևեկելի մասի և մայրերի սալապատման ու խճապատման, դրանց ընթացիկ նորոգման, բարեկարգման, ինչպես նաև քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտների ընդհանուր օգտագործման տարածքներում կամ փողոցահայաց հատվածներում նմանատիպ աշխատանքների կատարման համար, *եթե բարեկարգման աշխատանքներն իրականացնողը-ֆինանսավորողը (պատվիրատուն) իրավասու մարմինը չէ (համայնքապետարանը չէ)՝*

1) դիմողը (պատվիրատուն) կազմում է էսքիզային նախագիծ (պետական միջոցների հաշվին իրականացվող ծրագրերի դեպքում՝ նաև նախահաշիվ) և Որոշման N5 հավելվածի N4-1 ձևի դիմումով այն ներկայացնում է իրավասու մարմին (համայնքապետարան),

2) իրավասու մարմինը դիմումը ստանալու օրվանից 5-օրյա ժամկետում տալիս է համաձայնություն կամ մերժում այն՝ նշելով մերժման հիմքերը,

3) մերժման դեպքում կրկնակի դիմելու և իրավասու մարմնի ներկայացրած պահանջները դիմողի կողմից կատարվելու դեպքում՝ համաձայնության տրամադրման (կամ մերժման) հարցը քննարկվում է ոչ ավելի, քան եռօրյա ժամկետում,

4) ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի և համայնքի ղեկավարի կողմից համաձայնեցված էսքիզային նախագիծը հիմք է <Գնումների մասին> ՀՀ օրենքով սահմանված կարգով շինարարական աշխատանքների կատարման կապալառու ընտրելու և պայմանագիր կնքելու համար (բացառությամբ <(*)> Լրացուցիչ պահանջներ (Համաձայնեցումներ և աշխատանքների վերահսկողություն)> IV բաժնի 10-րդ և 11-րդ կետերով նախատեսված դեպքերի),

5) էսքիզային նախագիծը ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին (այդ թվում՝ ըստ անհրաժեշտության պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազոր մարմին և ՀՀ ոստիկանություն) համաձայնեցման է ներկայացվում պատվիրատուի կողմից՝ մինչև իրավասու մարմին (համայնքապետարան) ներկայացնելը,

6) էսքիզային նախագիծը կազմվում է լիցենզավորված անձի կամ կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով,

7) շինարարական աշխատանքների (տեխնիկական և հեղինակային) հսկողության ծառայության ապահովման պայմանները ամրագրվում են սույն կետի 6-րդ ենթակետով սահմանված (տվյալ ոլորտում գործունեության լիցենզիա ունեցող) անձի կամ կազմակերպության հետ կնքված պայմանագրում,

8) նշված աշխատանքների համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

8. Իրավասու մարմին հանդիսացող պատվիրատուները

ՀՀ կառավարության 19.03.2015թ N596-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) հաստատված N 4 հավելվածի N1 Ցանկի 2-րդ կետի համաձայն.

ՀՀ մարզերի (քաղաքային և գյուղական) համայնքային ենթակայության, ոչ տարանցիկ, տեղական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների, ներհամայնքային փողոցների երթևեկելի մասի և մայրերի սալապատման, խճապատման, դրանց ընթացիկ նորոգման ու բարեկարգման աշխատանքների համար, *եթե աշխատանքների պատվիրատու է հանդիսանում իրավասու մարմինը (համայնքապետարանը)*, կազմվում է թերությունների մասին ակտ, աշխատանքների ցանկ և անհրաժեշտության դեպքում նաև նախահաշիվ (եթե ներգրավվում են պետության և/կամ համայնքի միջոցներ).

1) ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի և համայնքի ղեկավարի կողմից համաձայնեցված թերությունների ակտը և/կամ աշխատանքների ցանկը (նախահաշիվը) հիմք է <Գնումների մասին> ՀՀ օրենքով սահմանված կարգով շինարարական աշխատանքների կապալառու ընտրելու և կապալի պայմանագիր կնքելու համար (բացառությամբ <(*)Լրացուցիչ պահանջներ (Համաձայնեցումներ և աշխատանքների վերահսկողություն)> IV բաժնի 10-րդ և 11-րդ կետերով նախատեսված դեպքերի),

2) թերությունների մասին ակտը և/կամ աշխատանքների ցանկը ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին (այդ թվում՝ ըստ անհրաժեշտության պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազոր մարմին և ՀՀ ոստիկանություն) համաձայնեցման է ներկայացվում պատվիրատուի (համայնքապետարանի) կողմից,

3) թերությունների մասին ակտը և/կամ աշխատանքների ցանկը (նախահաշիվը) կազմվում է լիցենզավորված անձի կամ կազմակերպության կողմից՝ պայմանագրային հիմունքներով,

4) շինարարական աշխատանքների (տեխնիկական և հեղինակային) հսկողության ծառայության ապահովման պայմաններն ամրագրվում են սույն կետի 3-րդ ենթակետով սահմանված (տվյալ ոլորտում գործունեության լիցենզիա ունեցող) անձի կամ կազմակերպության հետ կնքվող պայմանագրում,

5) նշված աշխատանքների համար շինարարության թույլտվություն չի պահանջվում:

9. Սույն Ցուցումների III գլխի 7-րդ և 8-րդ կետերով պետության, համայնքի և/կամ մասնավոր ներդրողների միջոցների հաշվին (այդ թվում համաֆինանսավորմամբ) նախատեսված շինարարական աշխատանքների Կապալառուների ընտրությունն իրականացվում է.

1) ՀՀ մարզերի տեղական ինքնակառավարման մարմինների (իրավասու մարմին հանդիսացող՝ համայնքապետարանների) կողմից՝ համայնքային և մասնավոր ներդրողների միջոցների ներգրավմամբ նախատեսվող (այդ թվում համաֆինանսավորվող, սուբսիդավորվող) ծրագրերի դեպքում,

2) ՀՀ պետական կառավարման մարմինների կողմից՝ պետական բյուջեների միջոցների հաշվին նախատեսված ծրագրերի դեպքում:

IV. (*) ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՀԱՆՋՆԵՐ (ՀԱՄԱՁԱՅՆԵՑՈՒՄՆԵՐ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ)

10. Պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիների տարածքներում՝

Որոշմամբ հաստատված N1 հավելվածի 137-րդ կետի համաձայն.

1) սալարկման, խճապատման, ընթացիկ նորոգման և բարեկարգման աշխատանքներին առնչվող դեպքերում կատարման ենթակա աշխատանքների էսքիզային նախագիծը իրավասու մարմինը եռօրյա ժամկետում ներկայացնում է պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազորված մարմին՝ համաձայնեցման, որի՝ ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2338-Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ կառավարության կամ համապատասխան տարածքային մարմնի թույլտվության առկայության դեպքում իրավասու մարմին ներկայացված կարծիքը, որոշումները հիմք են դիմողին համաձայնություն տալու, դիտողություններով լրամշակման վերադարձնելու կամ մերժելու համար:

11. Ավտոմոբիլային ճանապարհների ընթացիկ նորոգման աշխատանքների իրականացման ժամկետները

Որոշման N 4 հավելվածի N1 Ցանկի 7-րդ կետի 11-րդ ենթակետով սահմանված.

1) սալարկման, խճապատման, ընթացիկ նորոգման և բարեկարգման աշխատանքները երթևեկությունը խոչընդոտելու կամ սահմանափակելու դեպքերում, համաձայնեցվում են ՀՀ ոստիկանության հետ:

12. Հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժուն խմբերի կենսագործունեության ապահովմանն ուղղված միջոցառումների՝ ՀՀ կառավարության 2006 թվականի փետրվարի 16-ի N 392-Ն որոշմամբ հաստատված Հավելվածի 7-րդ կետի պահանջների ապահովման նպատակով.

1) հաշվի առնել, որ փողոցի երթևեկելի և հետիոտն գոտիների, ստորգետնյա և վերգետնյա անցումների, շենքերին ու շինություններին հարող տարածքների, հասարակական հանգստի վայրերի, սպորտային և մանկական խաղահրապարակների տարածքներում սալարկման աշխատանքների (ճանապարհային ծածկույթի հերթական վերանորոգումների) ընթացքում անհրաժեշտ է նախատեսել միջոցառումներ՝ դրանք թեքահարթակներով, հատուկ հարմարանքներով, ինչպես նաև լուսային, ձայնային և այլ նախազգուշացման միջոցներով կահավորելու համար: Աշխատանքներն անհրաժեշտ է

իրականացնել աստիճանաբար՝ փողոցի երթևեկելի մասի և մայթերի հերթական վերակառուցմամբ նախատեսվող միջոցառումների շրջանակներում:

2) ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N263-Ն հրամանի Հավելվածի 100-րդ կետի համաձայն՝ հենասայլակավոր հաշմանդամների և տարեցների համար նախատեսված մայթերի ու արահետների երկայնական թեքությունները չպետք է գերազանցեն 50%-ը, լայնականը՝ 10% -ը:

13. ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմինը՝ ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N730-Լ որոշման հավելվածի 11-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի ա) պարբերությունների համաձայն՝ ապահովում է.

ա. տրանսպորտի բնագավառում՝ տրանսպորտի ոլորտի նորմատիվ իրավական ակտերի կատարման վերահսկողությունը,

բ. քաղաքաշինության բնագավառում՝ քաղաքաշինական գործունեության բնագավառում իրավական ակտերի, քաղաքաշինական փաստաթղթերի, նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը:

V. ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

14. Աշխատանքների հանձնում-ընդունումը կատարվում է շինարարական աշխատանքների հերթական կատարողական ակտերի հանձնման-ընդունման գործընթացների և ավարտական (շահագործման թույլտվության) ակտի ձևակերպմամբ՝ իրավասու մարմնի (համայնքապետարանի), ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի, Նախագծային և շինարարական աշխատանքների Կապալառու կազմակերպության ներկայացուցիչների կողմից:

VI. ՏԵՂԱԿԱՆ ՀՈՒՄՔՈՎ, ԲՆԱԿԱՆ ՔԱՐԵՐԻՑ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՎԱԾՔԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐԻ ՍԽԵՄԱՏԻԿ ՊԱՏԿԵՐՆԵՐԸ, ՋՐԱՇԵՌԱՑՄԱՆ ՍԽԵՄԱՆ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՍԱԼԱՐԿՆԵՐԸ, ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ԳՆԱՀԱՇՎԱՐԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԵՆ ԸՍՏ ՀԱՎԵԼՎԱԾ 2-Ի**

15. ** Խոշորացված Գնահաշվարկը ենթակա է վերանայման՝ կնքվող պայմանագրերի և շուկայում ձևավորվող գնային քաղաքականության շրջանակներում:

VII. ՍԱԼԱՐԿՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՎԱԾՔԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

16. Բնական քարից սալարկն իրականացվում է ամուր, սառնակայուն, ջրակայուն, հրակայուն, երկարակյաց և շրջակա միջավայրի առումով ապահով քարի կտորներից:

17. Քարի կտորները մեծամասամբ ուղղանկյունաձև են, ինչը հեշտացում է նրանց տեղադրումը:

18. Բնական կամ արհեստական քարերից սալարկները հնարավորություն են տալիս քաղաքաշինական միջավայրում ստանալ տարբեր բնույթի ճարտարապետական ձևեր:

19. Սալարկն ունի բավարար դրենաժային հատկություններ, որը թույլ է տալիս ապահովել մակերևութային ջրահեռացումը:

20. Բնական քարից իրականացվող սալարկը շատ հեշտ է ենթարկվում վերանորոգումների՝ առանց էական վնաս հասցնելու պատվածքի ամբողջականությանը:

VIII. ՍԱԼԱՐԿՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՎԱԾՔԻ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

21. Ոչ պատշաճ որակով իրականացվող սալարկը կարող է նպաստել ուռչվածքների և նստվածքների առաջացմանը:

22. Եզրաքարի բացակայությունը կամ ոչ ճիշտ տեղադրումը կարող է հանգեցնել եզրային շարքերի տեղաշարժին:

IX. ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԱՀՄԱՆՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

23. Սալարկման աշխատանքներն իրականացվում են տվյալ ճանապարհային պատվածքին բնորոշ համապատասխան շերտերի նախատեսմամբ.

- 1) սալարկման քարեր՝ 10-15սմ հաստությամբ,
- 2) տակդիր շերտ ավազից՝ 10 սմ հաստությամբ,
- 3) կրող հիմնատակ խճից (կամ հատիկային կազմով խճավազային շերտ)՝ 15սմ հաստությամբ,
- 4) բնահող:

24. Սալարկման քարերի ընտրությունը պետք է իրականացվի ավտոմոբիլային ճանապարհների հաշվարկային ինտենսիվության և բեռնվածքների քաշի հաշվառմամբ:

25. Սալարկման աշխատանքների որակի հսկողության և պատրաստի տեղամասերի ընդունման գործառույթները վերապահվում են իրավասու մարմիններին՝ համայնքապետարաններին:

X. ՆՈՐՄԱՏԻՎ ԱՅԼ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՈՒ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ԿԻՐԱՌՎԵԼ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՎԱԾՔԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ, ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՈՒ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ԵՎ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

26. Ճանապարհային տարբեր պատվածքների հիմնական տեսակներն ու տեխնիկական պահանջները (ՀՀՇՆ IV-11.05.02-99 <Ավտոմոբիլային ճանապարհներ> շինարարական նորմեր):

27. Քաղաքային և գյուղական բնակավայրերի փողոցների, տեղական կամ կողային անցուղիների երթևեկային մասի, փողոցների և ճանապարհների երթևեկային մասի եզրով նախատեսվող հեծանվային ուղիների, տեղական նշանակության փողոցների և անցումների, մոտեցումների և անցուղիների, մայթերի և մայթեզրերի նվազագույն հաշվարկային ցուցանիշները (ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմեր):

28. Բնական քարի օգտագործմամբ ճանապարհաշինարարական աշխատանքների կատարման տեխնիկական պայմաններն ու պահանջները (ԳՕՍՏ 32018-2012 միջպետական ստանդարտ):

29. Շինարարական աշխատանքների կատարման համար անհրաժեշտ փաստաթղթերի և հիմքերի ձեռքբերման, ընթացքի և փաստագրման իրավակարգավորումները (ՀՀ կառավարության 19.03.2015թ N596-Ն որոշում):

30. Կապալառուների ընտրության և պետական պայմանագրերի կնքման իրավակարգավորումները (<Գնումների մասին> ՀՀ օրենք, <Լիցենզավորման մասին> ՀՀ օրենք):

XI. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

31. Սույն մեթոդական ուղեցույցը մշակվել է ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից՝ ի լրումն ՀՀ կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 24-ի N1583-Ն որոշման:

32. Սույն մեթոդական ուղեցույցը պարունակում է հղումներ հետևյալ նորմատիվ փաստաթղթերին:

1. ՀՀՇՆ IV-11.05.02-99 <Ավտոմոբիլային ճանապարհներ>,
2. ՀՀՇՆ 30-01-2014 <Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում>,
3. ԳՕՍՏ 32018-2012 միջպետական ստանդարտ,
4. ՀՀ կառավարության 19.03.2015թ N596-Ն որոշում,
5. ՀՀ կառավարության 24.09.2020թ N1583-Ն որոշում,
6. <Գնումների մասին> ՀՀ օրենք,
7. <Լիցենզավորման մասին> ՀՀ օրենք:

ՀԱՎԵԼՎԱԾ 2

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի

պարտականությանները կատարողի

> 2020թ դեկտեմբերի 29-ի N 105-Ն հրամանի

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀՀ ՄԱՐԶԵՐԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ (ԱՅԴ ԹՎՈՒՄ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐՈՒՄ) ՈՉ ՏԱՐԱՆՑԻԿ,
ՏԵՂԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ

ԱՎՏՈՄՈԲԻԼԱՅԻՆ ԵՎ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՈՒ ՓՈՂՈՑՆԵՐԻ
ԵՐԹԵՎԵԿԵԼԻ ՄԱՍԻ ԵՎ ՄԱՅԹԵՐԻ


ՍԱԼԱՐԿՄԱՆ, ԽՃԱՊԱՏՄԱՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
(ԳԾԱԳՐԱԿԱՆ, ՍԽԵՄԱՏԻԿ ՄԱՍ)

2020թ

ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՃԱՆԱՊԱՐՅԱՅԻՆ ՊԱՏՎԱԾՔԻ ՏԵՍԱԿՆԵՐ

ՃԱՆԱՊԱՐՅԻ ՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ՍԽԵՄԱ



ՏԵՂԱԿԱՆ ԲՆԱԿԱՆ ՔԱՐԵՐԻՑ ՃԱՆԱՊԱՐՅԱՅԻՆ ԿՈՇՏ ՊԱՏՎԱԾՔԻ ԴՐՎԱԳԱՅԻՆ ՊԱՏԿԵՐՆԵՐ



Բազալտե չորսվակասալ



Տուֆաքար



Բազալտե չորսվակասալ



Կտրված բազալտաքար

Միջհամայնքային և համայնքային ճանապարհների կոշտ ծածկույթային պատվածքներն առաջարկվում է իրականացնել յուրաքանչյուր համայնքում առկա տեղական բնական քարերի կիրառությամբ (բազալտ, տուֆ, կրաքար, բնական կոպիճ, բազալտախիճ և այլն)՝ հաշվի առնելով բնակլիմայական պայմանները, շահագործման և բեռնավորման պահանջները:



Բազալտախիճ



Կրաքար



Բնական արտադրական թափոններ




Կտրված կոպիճ



Գետաքար
Բնական կոպիճ


ՋՐԱՅԵՌԱՑՄԱՆ ԿՈՆՍՏՐՈՒԿՏԻՎ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ

ՃԱՆԱԴԱՐՅԻ ՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ՍԽԵՄԱ




Տարբերակ 1

Հանգույց 1 - Ջրիավաք առու (վաք) մայթեզրով



Տարբերակ 2

Հանգույց 2 - Ջրիավաք առու ճանապարհի միջնամասում



ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

1. ճանապարհի երթևեկելի մասի սալարկ
2. տակդիր շերտ ճանապարհային դրենաժային շաղախից
3. խճային հիմնատակ
4. հողային պաստառի գրունտ
5. վաքի հիմնատակ խճից կամ ճանապարհային դրենաժային շաղախից
6. ջրիավաք վաքի սալարկ

ԱՆՎԱՆԱՑԱՆԿ

1. ճանապարհի մերձվաքային սալարկ
2. տակդիր շերտ (ավազ կամ ճանապարհային դրենաժային շաղախ)
3. կրող շերտ
4. հողային պաստառ
5. հիմնատակ (հիմք) խճից կամ ճանապարհային դրենաժային շաղախից
6. ջրիավաք վաքի սալարկ

ՃԱՆԱԴԱՐՅԱՅԻՆ ՍԱԼԱՐԿՆԵՐ


Առաջարկվում է իրականացնել առանձին՝ կողք-կողքի կիպ տեղադրվող բնական տարբեր քարերից սալարկներ: Շարժման մեծ ինտենսիվությամբ ճանապարհներում կարող են կիրառվել չորսվակասալերից սալարկներ, որոնք ունեն հարթ մակերևույթ, իսկ ժամանակավոր և փոքր ինտենսիվությամբ ճանապարհներում՝ ջարդված քարերից, քարամշակման արտադրական թափոններից, խճից կամ գետաքարերից սալարկներ:



Ճանապարհների սալարկման օրինակներ


ՃԱՆԱԴԱՐՅԱՅԻՆ ՊԱՏՎԱԾՔԻ ԿՈՆՍՏՐՈՒԿՑԻԱՆ ՍԱԼԱՐԿՄԱՆ ՔԱՐԵՐՈՎ

ա) կտրված քարերի դեպքում



1. սալարկման քարեր 10-15սմ հաստությամբ
2. տակդիր շերտ ավազից
3. կրող հիմնատակ խճից
4. բնահող

բ) կտրված քարերի կամ արտադրական թափոնների դեպքում



ԳԵՈՍԻՆԹԵՏԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ ԿԻՐԱՌՄԱՐ ԾԱԾԿԵՐ ԵՎ ՀԻՄՔԵՐ

Գեոսինթետիկ նյութերը ոչ օրգանական սինթետիկ կամ բնական պոլիմերներից պատրաստված նյութեր են: Դրանք կիրառվում են ավտոմոբիլային ճանապարհների շինարարության մեջ՝ բնահողի և շինարարական կոնստրուկցիաների տարրերի տեխնիկական բնութագրերը բարձրացնելու նպատակով:

Ավտոմոբիլային ճանապարհների շինարարությունում գեոսինթետիկ նյութերն օգտագործվում են գեոթաղանթի, գեոճաղավանդակի, գաբյոնի, գեոցանցի, գեոտեքստիլի տեսքով: Ստորև բերվում են ՌԴ-ում կիրառվող գեոսինթետիկ նյութերի 1.0 քառ. մետրի արժեքները.

- գործվածքային պոլիէթիլային գեոտեքստիլի արժեքը՝ կախված տեխնիկական բնութագրերից, կազմում է 150-500 ռուբլի,
- գեոցանցի միջին արժեքը՝ մոտ 300 ռուբլի,
- գեոճաղավանդակի արժեքը՝ կախված հաստությունից, բջիջների բարձրությունից և կողմերի չափսերից, կազմում է մոտ 300 ռուբլի:



Գեոցանց



Գեոցանց



Գեոթաղանթ



Գեոտեքստիլ



Գեոճաղավանդակ



Գեոճաղավանդակ

ՍԱԼԱՐԿՄԱՆ ՔԱՐԵՐՈՎ 1.0 ՔԱՌ. ՄԵՏՐ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՎԱԾՔԻ ՀԱՄԱՐ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ԲՈԼՈՐ ԾԱԽՍԵՐԸ ԵՎ ԱՄՀ

1. Սալարկում բազալտե չորսվակասալերի միջոցով

ա) բազալտախճային նախապատրաստական շերտ՝ $h = 15,0$ սմ

- Նյութաձախս՝ բազալտե խիճ՝ $1,0 \times 0,15 = 0,15$ մ³

$$0,15 \times 3500 \times (1,166 \times 1,55) = 950,0 \text{ դրամ}$$

- աշխատանք՝ $950,0 \times 0,4 = 380,0$ դրամ

Ընդամենը՝ 1330,0 դրամ

բ) ավազի շերտ՝ $h = 10,0$ սմ

- Նյութաձախս՝ միջնահատիկ ավազ՝ $1,0 \times 0,10 = 0,10$ մ³

$$0,10 \times 2500 \times (1,166 \times 1,55) = 450,0 \text{ դրամ}$$

- աշխատանք՝ $450,0 \times 0,4 = 180,0$ դրամ

Ընդամենը՝ 630,0 դրամ

գ) բազալտե չորսվակասալեր՝ $h = 10,0$ սմ

- Նյութաձախս՝ բազալտե չորսվակասալեր՝

$$1,0 \times 0,8 \times 5000 \times (1,166 \times 1,55) = 7230,0 \text{ դրամ}$$

- աշխատանք՝ $7230,0 \times 0,4 = 2900,0$ դրամ

Ընդամենը՝ $7230,0 + 2900,0 = 10130,0$ դրամ

դ) բնահողի մշակում մեխանիզմով և ձեռքով, ներառյալ ավելորդ գրունտի տեղափոխումը՝

$$1,0 \times 0,2 \times 3000,0 \times 1,55 = 930,0 \text{ դրամ}$$

Ընդհանուրը՝ $1330,0 + 630,0 + 10130,0 + 930,0 = 13020,0$ դրամ



Բազալտե չորսվակասալ



Բազալտե չորսվակասալ

ԳՆԱՀԱՇՎԱՐԿ

ՍԱԼԱՐԿՄԱՆ ՔԱՐԵՐՈՎ 1.0 ՔԱՌ. ՄԵՏՐ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՎԱԾՔԻ ՀԱՄԱՐ՝ ՆԵՐԱՌՅԱԼ ԲՈԼՈՐ ԾԱԽՍԵՐԸ ԵՎ ԱԱՀ

2. Սալարկույնը քարամշակման արտադրական թափոնների կիրառմամբ



Կոտրված բազալտաքար



Բնական արտադրական
թափոններ



Կրաքար



Տարբեր քարերից սալեր

- Նյութածախս՝ քարամշակման արտադրական թափոններ՝ հաստությունը մինչև 10.0սմ

$$1,0 \times 0,8 \times 1500 \times (1,166 \times 1,55) = 2170,0 \text{ դրամ}$$

- աշխատանք՝ $2170,0 \times 0,4 = 870,0$ դրամ

Ընդամենը՝ 3040,0 դրամ

Ընդհանուրը՝ $1330,0 + 630,0 + 3040,0 + 930,0 = 5930,0$ դրամ